Ախուրյան համայնքի 2024թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությանը կից:

Տեղեկատվություն հաշվետու տարում համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից կատարված ծախսերի ուղղությունների և չափերի մասին

Համայնքի 2024 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 209-Ն որոշմամբ հաստատված բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդը կազմել էր 553 600,0 հազար դրամ, որից ֆոնդային բյուջեով կանխատեսված ելքերի ֆինանսավորման համար չի նախատեսնվել:

Համայնքի ավագանու 2024 թվականի փերտվարի 15-ի թիվ 17-Ն որոշումով համայնքի ճշտված բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդը կազմել է 780 000,0 հազար դրամ, որից 753 000,0 հազար դրամ հատկացվել է ֆոնդային բյուջեով նախատեսված ելքերի ֆինանսավորման համար:

Համայնքի բյուջեի կատարման ընթացքում պահուստային միջոցների փաստացի ծախսը կազմել է 776 328,1 հազար դրամ, այդ թվում վարչակամ մաս 23 328,1 հազար դրամ, ֆոնդային մաս 753 000,0 հազար դրամ:

ՀՀ Կառավարության կողմից համայնքներում իրականացվող սուբվենցիոն ծրագրերին համայնքի մասնակցությունը ապահովելու, ինչպես նաև սեփական կարիքների համար տրանսպորտային և վարչական սարքավորումներ ձեռք բերելու նպատակով համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից համայնքի բյուջեի ֆոնդային մաս է հատկացվել է 753 000,0 հազար դրամ:

Համայնքի բյուջեի պահուստային ֆոնդի գումարներն ուղղվել են ներքոհիշյալ ծրագրերին՝ ըստ գործառնական դասակարգման բաժինների և ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների.

Բաժին 1 Խումբ 1 Դաս 1 « Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում» 21 296,2 հազար դրամ, որից՝ «Տրանսպորտային սարքավորումներ» 5121 հոդվածին 14 000,0 հազար դրամ, «Վարչական սարքավորումներ » 5122 հոդվածին 7 296,2,0 հազար դրամ:

Բաժին 1 Խումբ 6 Դաս 1 « Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» 225 698,0 հազար դրամ,որից՝ «Շենքերի և շինությունների կառուցում» 5112 հոդվածին 204 637,0 հազար դրամ «Այլ մեքենաներ և սարքավորումներ» 5129 հոդվածին 14 850,0 հազար դրամ «Նախագծահետազոտական ծախսեր »5134 հոդվածին 6 211,0 հազար դրամ

Բաժին 4 Խումբ 5 Դաս 1 «Ճանապարհային տրանսպորտ» 467 830,8 հազար դրամ, որից՝«Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» 5113 հոդվածին 467 830,8 հազար դրամ:

Բաժին 5 Խումբ 1 Դաս 1 «Աղբահանություն» 38 175,0 հազար դրամ,որից «Այլ մեքենաներ և սարքավորումներ» 5129 հոդվածին 38 715,0 հազար դրամ:

Բաժին 11 Խումբ 01 Դաս 02 «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» ծրագրի ներքոհիշյալ տնտեսագիտական հոդվածներով համայնքի ավագանու որոշումների հիման վրա կատարվել են հետևյալ ծախսերը

«Գրասենյակային նյութեր և հագուստ» 4261 հոդվածին է հատկացվել **1 800,0** հազար դրամ համայնքի թվով 33 դպրոցներում գործող առաջին դասարանի 450 երեխաներին, որպես նվեր գրենական պիտույքներ է ձեռք բերվել:

«Ընթացիկ դրամաշնորհ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» 4637 հոդվածին է հատկացվել **7 554,7** հազար դրամ**,** որից 1 200,0 հազար դրամ հատկացվել է Ախուրյան համայնքի «Վահրամաբերդի Հարություն Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին, LEADSHIRAK ծրագրի դրամաշնորհի տաս տոկոսի չափով ներդրում կատարելու համար:

1 210,0 հազար դրամ հատկացվել է Ախուրյան համայնքի «Կառնուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին, ֆոտովոլտային կայանի տեղադրմանը ներդրում կատարելու համար:

450,0 հազար դրամ հատկացվել է Ախուրյան համայնքի «Ախուրյանի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին, կազմակերպության շենքի տանիքի և պատերի վերանորոգման համար:

1 000,0 հազար դրամ հատկացվել է «Ախուրյանի Նիկոլ Աղբալյանի անվան ավագ դպրոց » ՊՈԱԿ-ին, թվով 6 դասասենյակների մասնակի վերանորոգման համար:

370,0 հազար դրամ հատկացվել է Ախուրյան համայնքի «Վահրամաբերդի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ին, LEADSHIRAK ծրագրի շրջանակներում

աշակերտական գույք,համակարգիչ և երաժշտական գործիքների ձեռք բերման համար որպես համայնքային տաս տոկոս ներդրում:

743,7 հազար դրամ հատկացվել է Ախուրյան համայնքի «Արևիկի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ին, LEADSHIRAK ծրագրի շրջանակներում հիմնական միջոցներ և արագամաշ գույք ձեռք բերման համար որպես համայնքային տաս տոկոս ներդրում:

1 000,0 հազար դրամ հատկացվել է Ախուրյան համայնքի «Հացիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին, ֆոտովոլտային կայանի տեղադրմանը ներդրում կատարելու համար:

500,0 հազար դրամ հատկացվել է Ախուրյան համայնքի «Առափիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին, դպրոցի ջեռուցման համակարգի վերանորոգման համար:

200,0 հազար դրամ հատկացվել է Ախուրյան համայնքի «Այգաբացի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին, **«Հայրենի եզերք»** համայնքային միջոցառում կազմակերպելու համար:

150,0 հազար դրամ հատկացվել է Ախուրյան համայնքի «Նոր Ախուրյանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին, ուսուցչանոցի վերանորոգման համար:

731,0 հազար դրամ հատկացվել է Ախուրյան համայնքի «Արևիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին, LEADSHIRAK ծրագրի շրջանակներում **«Տեխնոլոբ»** կրթական կենտրոն կառուցելու համար որպես համայնքային տաս տոկոս ներդրում:

«Այլ ընթացիկ դրամաշնորհներ» 4639 հոդվածին հատկացվել է **5 111,4** հազար դրամ որից՝

300 000,0 հազար դրամ հատկացվել է «Նարնջագույն Քոբուլեթի 2024» արվեստի միջազգային մրցույթ փառատունին Ախուրյանի համայնքի «Մարինա» պարային համույթի մասնակցությունը ապահովելու համար համույթի ղեկավար Լիպարիտ Մարկուսյանին

2 100,0 հազար դրամ հատկացվել է Ախուրյան համայնքի Արևիկ բնակավայրում գտնվող Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայ կաթողիկէ եկեղեցում ընթացող վերանորոգման աշխատանքների համար:

1 800,0 հազար դրամ հատկացվել է Ախուրյան համայնքի Քեթի բնակավայրում գտնվող Սուրբ Աստվածածին եկեղեցու շինարարական աշխատանքների իրականացման համար Քեթի եկեղեցու վերակառուցման հիմնադրամին:

200,0 հազար դրամ հատկացվել է Ախուրյան համայնքի Մարմաշեն բնակավայրի «Բժշկական ամբուլատորիա» ՊՈԱԿ-ին ջեռուցման համակարգի անցկացման համար:

711,4 հազար դրամ հատկացվել է Շիրակի թեմի առաջնորդարանին Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի «Սուրբ Աստվածածին» և Ազատան բնակավայրի «Սուրբ Հարություն» եկեղեցիների ջեռուցման նպատակով:

600,0 հազար դրամ հատկացվել է Շիրակի թեմի առաջնորդարանին Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի «Սուրբ Աստվածածին» և Ազատան բնակավայրի «Սուրբ Հարություն» եկեղեցիների ջեռուցման նպատակով, սակայն վճարումները 2024թվականին չի կատարվել:

«Կրթական,մշակույթային և սպորտային նպաստներ բյուջեից» 4727 հոդվածին է հատկացվել **1 250,0**հազար դրամ՝ որոնք փոխանցվել են 50,0 հազարական դրամներ «Լավագույն ուսուցիչ» անվանակարգում՝

Ախուրյան համայնքի «Ախուրյանի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հասարակագիտության առարկայի ուսուցչուհի Անահիտ Սերյոժայի Մազմանյանին,

Ախուրյան համայնքի «Ազատանի միջնակարգ դպրոցի» ՊՈԱԿ-ի հայոց լեզվի և գրագանության առարկայի ուսուցչուհի Լիանա Ռուբիկի Իկիլիկյանին,

Ախուրյան համայնքի «Մուսալյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց լեզվի և գրագանության առարկայի ուսուցչուհի Գոհար Ռուբենի Պետրոսյանին,

Ախուրյան համայնքի «Կամոյի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց աշխարագրության առարկայի ուսուցչուհի Գոհար Ռուբենի Պետրոսյանին,

Լավագույն խմբավար անվանակարգում՝

Ախուրյանի համայնքի «Վահրամաբերդ միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ-Ի ընթերցանության խմբավար Արփինե Արտավազդի Սարգսյանին:

Ախուրյան համայնքի Ազատան բնակավայրի բնակիչ Էլմիլյա Գագիկի Հովհաննիսյանին հատկացվել է 300,0 հազար դրամ **«Լույսերով երկիրը»** գրքի հրատարակության համար:

Ախուրյան համայնքի Երազգավորս բնակավայրի բնակիչ Սամվել Սիրեկանի Մարգարյանին հատկացվել է 300,0 հազար դրամ **«Մատյան երջանկության»** գրքի հրատարակության համար:

100,0 հազարական դրամներ Է հատկացվել՝

Հանրակրթական պետական չափորոշչի ներդրման և հանրակրթության ուսումնական հաստատություններին ցուցաբերած աջակցության համար,

Ախուրյան համայնքի «Ախուրյանի Նիկոլ Աղբալյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Գեղամ Սամվելի Պետրոսյանին,

Ախուրյան համայնքի «Ախուրյանի Նիկոլ Աղբալյանի անվան ավագ դպրոց » ՊՈԱԿ-ի համակարգող Արսինե Մինասի Ամիրյանին:

Հանրակրթության բարեփոխումներին միտված ակտիվ գործնեության համար՝ Ախուրյան համայնքի «Ջաջուռի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Թամարա Արմենակի Սուվարյանին:

2024թվականի «Տարվա լավագույները» մրցույթում հաղթող ճանաչվելու համար՝ Ախուրյան համայնքի «Ախուրյանի թիվ 2հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ուսուցչուհի Անահիտ Սերյոժայի Մազմանյանին:

«Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածին է հատկացվել **500,0** հազար դրամ՝ որից՝ 500,0 հազար դրամ դրամական օգնություն է տրամադրվել Ախուրյան համայնի Կամո բնակավայրի 2024թվականի ապրիլի 19-ին մահացած Արամայիս Ավետիքի Ղազարյանի հորը Ավետիք Արամայիսի Արեստակեսյանին:

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից համայնքի ավագանու 12.04.2024թ. թիվ 88-Ա որոշմամբ 4 560,0 հազար դրամ է հատկացվել **Բաժին 9 Խումբ 2 Դաս 2 Միջնակար /լրիվ/ընդհանուր կրթություն ծրագրի** նվիրատվություն այլ շահույթ է չհետապնդող կազմակերպություններ 4819 հոդվածին՝ որը, փոխանցվել է <<Հակոբյաններ համահայկական մշակույթային կենտրոնին>> հասարակական կազմակերպությանը համայնքի գերազանց սովորող 23 աշակերտների 7 օրյա շրջագայությունը Արաբական միացյալ էմիրությունների Դուբայ քաղաքում կազմակերպելու համար :

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից համայնքի ավագանու որոշմամբ 2 552,1 հազար դրամ է հատկացվել, **Բաժին 5 Խումբ 6 Դաս 1 Շրջակա միջավայրի պաշտպանության /այլ դասերին չպատկանող/ ծրագրի** Մասնագիտական ծառայություններ 4241 հոդվածին՝ որը փոխանցվել է <<Հիդրոօթերևութաբանության մոնիտորինգի կենտրոն ՊՈԱԿ>>-ին համայնքի Հիդրոերկրաբանական տեկատվության և անձնագրի կազման համար